

կին հասկըցնել: Այս որովհետեւ արդոցմէ ոմանք դիւրաւ հասկըցած կ'ըլլան դասը, և վարպետէն կրկին կրկին բացատրութիւն լսելով նոյն դասին վրայ ուրիշներուն պատճառաւ՝ կըրնան ձանձրանալ, անոր համար շատ աղէկ հնարք է այսպիսիներուն ապրու պրել որ վարպետին առջեւ բացատրեն դասը, և տկար եղբորը հասկըցնեն. եթէ աղէկ կատարեն աս պաշտօնը՝ գովուին, ու թէ որ սխալին՝ անուշութեամբ մը յանդիմանուին:

Վանք հիմա տեսնելու թէ ինչ պիտի ընէ վարժապետն որ ուսմունքը զուարճալի ըլլայ տղոց: Տղայական բնութիւնը կարօտ է զբօսանքի և զուարճութեան, և միայն անով է որ իր հոգւոյն և մարմնոյն կարողութիւնները կը զօրանան ու կը հաստատուին. ուրեմն որչափ որ տղու մը տարիքը պզտիկ է՝ այնչափ աւելի պիտի ջանայ վարժապետն որ աս բնական զգացման գէմէն հոգործէ. ուստի ամէն հնարք պիտի բանեցընէ որ կարգալը՝ գրելը և ամէն ուսմունք խաղի պէս զուարճալի ու փափաքելի բան ըլլայ տղուն: Պէտք է ստէպ փոփոխել ուսմունքը. կարգալու ժամանակը համառօտել, երբեմն ալ բոլորովին դադրեցնել, պարգէներ խոստանալ, և արժանաւորին տալով՝ թէ անոր եռանդը աւելցընել, և թէ ուրիշներուն բարի նախանձը շարժել: (Ը) Ե որ տղայ մը բնութեամբ ծոյլ է կարգալու, պէտք է խստութեամբ ու բարկութեամբ վարուիլ հետը, հապտ շատ շատ՝ ուրիշներուն բարի օրինակովը զինքը երբեմն ամբըցընել քաղցրութեամբ ու յորդորել. և թէ որ քիչ մըն ալ յորդորուի ու եռանդ ցուցնէ՝ հաւնիլ իրեն, գովել և վարձատրել: Այրեմն տղաք յանկարծ կը վառուին չափէ դուրս եռանդով մը կարգալու գրելու, անանկ որ ինչուան խաղալու ալ աչք չեն ունենար. բայց որովհետեւ փորձով յայտնի է թէ այսպիսի տղայական եռանդը շուտ կը պաղի, ու երբեմն բոլորովին ալ կը մարի, ա-

նոր համար վարպետին հնարքը պիտի ըլլայ որ գոնէ երբեմն ան եռանդն ալ սանձէ, ու տղան կարգալ ուզած ատենը՝ խաղալ տայ անոր. ասով աւելի եռանդով կը նստի ետքը տղան կարգալու և ուսման հետ ըլլալու: Ուրիշ շատ հնարքներ ալ կան՝ զուարճալի ընելու տղոց իրենց ուսմունքը. բայց մենք առ այժմ գոհ ըլլանք դաստիարակներուն և ծնողաց միտքը ձգելով աս հնարքն ալ՝ որ գլխաւորներէն մէկն է. այսինքն որչափ որ կարելի է՝ պատկերներով սորվեցընել տղոց հարկաւոր բաները, և մանաւանդ պատմութիւնները, ինչպէս ուրիշ անգամ ալ ըսինք: Ս'երջասպէս ջանալու է որ ուսումը մէյմը սիրելի ըլլայ տղոց. ալ անկէ ետքը ոչ վարժապետները նեղութիւն կը քաշեն և ոչ տղաք. ոչ վարժապետներուն սիրտը կը մաշի և բերանը կը յոգնի՝ տղաքը կարգալու ստիպելով, և ոչ տղոց համար ուսումը տանջանք ու պատիժ կը դառնայ. հապա գիրքը իրենց զուարճալի խաղերէն մէկը կ'ըլլայ տղայութեան ատեննին, սիրելի բարեկամը կ'ըլլայ երիտասարդութեան ատեննին, և մեծ միտքարութիւն ծերութեան ատեննին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լ'ԵՐԺ:

ՀԱՅԿԻՆ երկու հարիւր տարի վերջը մեր Լ'Երաժ նահապետը որ հարմային որդին էր՝ անցաւ հայկազանց աթոռը, և անոր փառքը աւելցուց նոր ազգասիրութեամբ և մեծամեծ քաջագործութեամբ: Իրեն վարքը թէ ազգասիրութեան և թէ արդար աշխարհակալութեան համար շատ բաներու մէջ ու շատ կերպով մեզի օրինակ կրնար ըլլալ՝ թէ որ պատմու-

Թեան մէջ պահուած ըլլային անոր ցանկալի յիշատակները : Բայց դիտելու բան է որ իր շատ մեծագործութեանց չիշուելին ալ իրեն աւելի փառք է . որովհետեւ այնպէս երեւելի և շատ էին ըրած գործքերը , որ Խորենացին զատ գրքի մէջ պատմելու միտք ունէր : Բնորոշ որ աս դիտաւորութիւնը չկրցաւ կատարել բազմադիւն ծերունին . բայց մենք պարտական ենք իրեն երախտագէտ ըլլալու նաև անոր համար , որ աս դիւցազին պատմութիւնը երկու բառով ալ ըլլայնէ՝ մեզի աւանդեց . և այնչափ է աս բառերուն յարգը , որ Բրամայ վրայ ուրիշ բան չպատմուէր ալնէ՝ բաւական էին յաւիտենական պարծանք ըլլալու իրեն , և ասոնք են .

« Բայ Խորենացի և Կորենացի » : Բնորով կ'իմացուի թէ բոլոր իր տէրութեան ատենը , որ վաթսուն տարի չափ քէնց , աշխարհակալութիւնէն զատ՝ միշտ բարեկարգութեան և աշխարհաշինութեան ետեւէ եղաւ , որ Թագաւորի մը ամենէն աւելի գովելի գործքերն են . երկրորդէն ալ կ'երենայ որ բոլոր ջանքը ոչ իրեն շահուն և ոչ փառասիրութեանը համար էր , հապա միայն իր ազգին սիրոյն ու Հայաստանի փառացը համար . և աս ջանքն ու սէրը այնչափ մեծ էր Բրամայ սրտին մէջ , որ « Եւ »

« համարէր , կ'ըսէ պատմիչը , զմեռանէն ի վրայ հայրենեացն , քան թէ տեսանէլ զորդիս օտարածնաց կուխելով զսահմանս հայրենիս , և հարազատից արեան նորա՝ տիրել անոնց օտարածնաց » :

Բայսպիսի հոգւով Բրամիր հօրը տեղը անցնելուն պէս՝ սկսաւ տէրութեանը չորս դին պտրտիլ ու բռնաւորները քշել հալածել : Երեւոյ կամ Բարաց ազգէն՝ Խիւքար անունով բռնաւոր մը երկու տարի կար որ Հայաստանի մէկ կտորին տիրեր էր . Բրամիրսուն հազար կտրիճներ ժողովեց ու ելաւ Խիւքարին դէմ . ասիկայ հպարտ ու պատերազմասէր մարդ

մըն էր՝ Բելայ նման , անոր պէս ալ շատ զօրք ունէր իրեն օգնական . բայց հայրենասէր բանակին մէկ զինուորը ամբողջ գունդի մը դէմ կրցաւ կրուուիլ : Հայերը յաղթող ելան , Խիւքարը ձեռք ընկաւ . և Բրամիր (ինչպէս որ Հայկ Բելայ դիակը ըրեր էր) բռնեց Խիւքարը , տարաւ Հայաստանի մայրաքաղաքը Բրամիր , ու անոր աշտարակին վրայ գամել տուաւ ան գոռոզ ճակատը՝ որ անիրաւութիւն ձեռք ձգած պսակներովը կ'ուզէր պսակուիլ , և արդարութեամբ զրկուեցաւ նաև իր ունեցածէն :

Բայ յաղթութեան լուրը լսեց նաև Խինոս Կորեստանեայց Թագաւորը , որ Բելայ թոռներէն էր , ու անոր թէ աթոռը և թէ հպարտութիւնը ժառանգեր էր . միտքն ալ դրած էր անոր մահուան վրէժը Բրամին հանելու . սկսաւ վախնալ որ չըլլայ թէ ինքն ալ իր պապուն պէս անխելք վրէժխնդրութեւն չարաչար զոհ ըլլայ . ուստի առջի անխելքութեանը դէմ՝ Բրամայ մարգըրտէ վարսակալ խրկեց , և ըսաւ որ Բրամիրեն երկրորդը սեպուի . որովհետեւ ինքն էր ան ատեն Կիայի մեծ Թագաւորը :

Եւ ատենները Բարշամ անունով հսկայ կտրիճ մը Կորուոց երկրէն Հայաստանի սահմանը անցնելով չորս դին կ'աւրըշտուէր , ու մէկ մասին վրայ տուրք ձգեր էր . անոր դէմ գրնաց Բրամ , ու շատ պատերազմներով վախցընելով քէնց ինչուան Կորուոց լեռները , ու հոն սպաննեց . անոր երկիրն ալ Կադմեանց ցեղին տուաւ , ինչպէս Խիւքարինը՝ Սիսակեանց տուեր էր : Եւ այնչափ անուանի մարդեղած է աս Բարշամ կամ Բարշամին ըսուածը , որ Կորիք երկար ատեն աստուծոյ տեղ գնելով՝ պաշտեր են զինքը :

Բրամ մէկ յաղթութենէն մէկալը անցնելով՝ հասաւ ինչուան Կապադովկիա , ան կողմի բռնաւորները ջնջեց , ու իր արդար ու անոյշ իշխանութիւնը տարածեց . անկէ ելլելու

ատենը իր իշխաններէն Սշակ անու-
նով մէկը վերակացու դրաւ երկրին .
անիկայ ալ իր անունովը քաղաք մը
շինեց , որ տեղացի Յոյները Սաթակ
կամ Սալաթա կը հնչէին . ետքը եղաւ
կեսարիա կամ Վայսերի ըստւածա-
նուանի քաղաքը :

Իմացաւ Մարմոր Պայապիս Վա-
ղեայ անունով մէկը Սե ծովուն ու
Սիջերկրական ծովուն մէջտեղուն-
քը եղած երկիրները անհանգիստ կ'ը-
նէ աւազակութեամբ . ետեւէն ըն-
կաւ , զարկաւ փախուց ինչուան Սի-
ջերկրականին կղզիներէն մէկը ձգեց :

Բնակերպով Հայաստանի բոլոր սահ-
մանագլուխները խաղաղցընէէն վեր-
ջը՝ երբոր քաջութեամբ ու բարերա-
րութեամբ պսակուած իր հայրենիքը
կը դառնար , ապրսպրեց ան երկիրնե-
րուն վերակացուացը որ իրենց ժո-
ղովրդեանը հայերէն սորվիլ տան ,
որպէս զի անոնք ալ իրենց տիրոջը
լեզուն գիտնան , ու կարենան քաղա-
քական բաներու մէջ մտնել ու խօ-
սիլ , և լեզուէն սկսեալ՝ Հայոց սովո-
րութեանցն ալ վարժին ու խաղաղու-
թեամբ ապրին : Բնուշտ չէր կրնար
մէկ աշխարհակալ մը Մարմէն աւելի
իրաւունք ունենալ հրամայելու որ
հպատակները իր լեզուն սորվին . վասն
զի անիկայ բուն մարդկութեան լե-
զուն էր , և դեռ շատ ատեն չէր որ
մէկալ լեզուները անկէ զատուած
էին :

() տար ազգեր որ Մարմայ գործ-
քերը չէին կրնար չլսել ու չզարմա-
նալ թէ անոր ըրածներուն վրայ , և
թէ Հայոց քաջութեան վրայ , Մար-
մայ անունովը Մեֆէ կամ Մարմէն
կոչեցին մեր ազգը , իբր թէ Մարմայ
պէս կտրիճի մը արժանի ժողովուրդ :

Վաղցը յիշատակ մըն է մեր ազ-
գին , որ երբոր մէկմէկու Հայ կ'ը-

սենք , մտքերնիս կուգայ Հայկ՝ մեր
քաջ նահապետը , մեր առջի ազա-
տիչը , ծնողը ու մեզ ազգ ընողը .
ու երբոր ուրիշներէն մեր Մեֆէ ա-
նունը լսենք , մտքերնիս կուգայ աս
անունը՝ որ մեր նահապետին քաջու-
թեամբը , արդարութեամբն ու ազ-
գասիրութեամբը վաստակեր ենք :

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԴԱՐԱՆԻ ԿԱՆՈՒՆ

ՊԵՏԱԴԱՐԱՆԻ ԿԱՆՈՒՆ (Նունաց Զարտա-
սաններուն գլխաւորը՝ Վրիստոսէ 385
կամ 384 տարի առաջ ծնաւ Մեֆէնք
քաղաքը : Իրեն հայրը վաճառական
էր , ու նաեւ թուր շինելու գործա-
տուն ունէր հոն . իսկ մօր կողմանէ
կ'ըսէին թէ ինքը օտարազգի է ու իր
հայրենեացը թշնամի : Պեմոսթենէս
եօթը տարուան էր՝ երբոր հայրը մե-
ռաւ . իր իննամակալները հօրը թո-
ղուցած ժառանգութիւն կերան , ու ա-
մենեւին տղուն դաստիարակութեանը
վրայ հոգ չունեցան . ուստի Պեմոս-
թենէս գիտութեց ու փիլիսոփայու-
թեան մէջ ինչ յառաջադիմութիւն
որ ունեցաւ՝ իր քրտինքովն ունեցաւ :
Իսէոսի ու Պղատոնի աշակերտ եղաւ ,
ու մեծ ջանքով Իսոկրատայ ատենա-
բանութիւնները սերտեց : Տասնութ-
թը տարեկան եղած ատենը Մեֆէնքի
ատենին մէջ մեծ Զարտասանութիւն
ճառ մը խօսեցաւ իր իննամակալնե-

1 Կապագովկիոյ կողմերը որովհետեւ Հայոց
ձեռքն ընկած օտար երկիրներուն առաջինը եղան ,
անոր համար Առաջին Հայքըսուեցան . անկէ վեր-
ջը տիրուած աշխարհներն ալ ըսուեցան Երկրորդ ,
Երրորդ ու Չորրորդ Հայք :

1 Ընորհային , անկէ ալ ուրիշները առնելով ,
կարծեցին թէ մեր ազգին Արմէն ըսուիլը Արմե-
նակէն ելած է , որ Հայկայ որդին էր . բայց ստոյ-
գը աս է որ Արամէն ելած է Արամեան անունը :
Լեւելի անտեղի է օտար պատմիչներուն ըսածը ,
թէ Սեմայ թոռնէն առնուած է աս անունը , կամ
թէ Արմենիոս անունով թեոսազգիէ մը : Այս-
պէս Մաթակին համար ալ Յովսէպոս Մոսորէն
առած է կ'ըսէ , բայց Մարիբասին պատմածը ան-
տարակուսելի է :